ԿԱՐԾԻՔ

Բենիկ Վարդանի Վարդանյանի

«Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան հատվածի բնակչության սոցիալական կազմը և թաղման ծեսն ըստ ուշ բրոնզ և վաղերկաթեդարյան դամբանային համալիրների» Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ատենախոսության նյութը՝ Հայկական լեռնաշխարհի հին բնակիչների կյանքի, կենսագործունեության ուսումնասիրությունն է, իր սոցիալ-ժողովրդագրական պատկերով, նաև վաղ անցյալի մարդու տեսածիրից ելնելով՝ թաղման ծեսի մանրամասն ուսումնասիրությունը: Այս երկու ուղղությունները լրացրել և հարստացրել են միմյանց, հասցրել ցանկալի հանգրվանի:

Ուսումնասիրությունը կատարված է ուշ բրոնզի և վաղ երկաթի պատմահնագիտական դարաշրջանների սահմաններում, լեռնաշխարհի մի հատվածում, որը հեղինակը սիրում է անվանել ավելի վաղ շրջափուլի՝ Կուրարաքսյան Միջագետք եզրույթով, այսինքն, արդի Հայաստանի Հանրապետության տարածքը և Արցախն իրենց շրջակայքով:

Գրեթե բոլոր հնագետներն անդրադարձել են թաղման ծեսին, նաև ատենախոսության նյութ են դարձրել, սակայն դամբարանադաշտերի ընձեռած անսպառ արգասիքները թույլ են տալիս վերաքննել նախկին ընկալումներն ու տեղի տալ նորանոր հետազոտությունների, մտահղացումների և եզրահանգումների:

Բ. Վարդանյանի ներկայացրած ծավալուն աշխատանքը՝ կատարված դամբանային մշակույթի հիման վրա, ողջունելի է և նոր մոտեցումներով առլեցուն: Բավական է ընթերցել բովանդակության ցանկն իր ենթավերնագրերով և օգտագործված հսկայական գրականությունը, հասկանալու համար, թե հայցվորը ժրաջան մեղվի ինչպիսի աշխատանք է կատարել ի մի բերելով իր ուսումնասիրած նյութի վերաբերյալ բոլոր տվյալները, որոնք ատաղձն են դարձել սույն աշխատանքի:

Հեղինակը վերականգնել է թաղման ընթացքն ամբողջությամբ, բաժանելով այն հինգ հաջորդական փուլերի: Թաղման ծեսի հնարավոր բոլոր պարամետրերով կատարել է վիճակագրություն, ցույց տալով ծեսի նույնիսկ ամենափոքր թվացող տարրերի

քանակական և տոկոսային չափանիշները: Խրախուսելի և այժմեական աշխատանք է, որի միջոցով կարելի է ստանալ շատ անորոշ հարցերի պատասխաններ:

Բնականաբար, հաշվարկները կատարված են հնագիտական գրականությունից ելնելով, պեղված դամբարանների հիման վրա, ուստի չպետք է բացարձականացնել բերված տվյալները կամ թերահավատ լինել, քանի որ սրանք վիճակագրությամբ կատարված ուսումնասիրությունների առաջին փորձերն են:

Տեղեկատվության լիարժեք աղբյուր կարող են լինել ծայրեծայր պեղված և բազմակողմանի ուսումնասիրված դամբանադաշտերը: Այդ հնարավորությունը դեռևս չկա, քանի որ դամբարանները պեղվում են կամայական, ըստ հնագետի հայեցողության: Օրինակ, Կուրթանի Քարոտ հողեր դամբանադաշտում պեղված է միայն չորս կրոմլեխ, երբ ողջ դաշտը ծածկված է կրոմլեխների չափազանց խիտ ցանցով:

Կրոմլեխները բաժանվել են մի քանի տիպի. միաշրջան, երկշրջան, քառանկյուն և այլն (էջ 20): Հեղինակն ամենուրեք «կրոմլեխի» փոխարեն օգտագործում է «կրոմլեխ-հենապատ» բառակապակցությունը: Վերջինը լավ է, հայեցի, սակայն ենթադրում է պատ, որը հենարան է: Կարծում ենք, դա հարմար է օգտագործել այն դեպքերում, երբ խոշոր քարաբեկորներով շուրջանակի կամ քառանկյունաձև շարված «պատը», ամուր գրկել է դամբարանի վերգետնյա թումբը կամ գրահը: Կան կրոմլեխներ, որոնք օրգանապես կապված չեն թմբի, գրահի կամ խցի հետ, այլ սահմանազծում են ննջեցյալի անդրաշխարհային սրբազան տարածքը: Այս դեպքում, կարելի է չխուսափել «կրոմլեխ» բառեզրից, մանավանդ, որ բառն իր «cro» արմատով հենց կորն է, թեքը, շրջանը:

Ինչ վերաբերում է երկշրջան կրոմլեխների երկրորդային թաղման հետ կապին՝ այն դեռևս պարզված չէ: Իսկ կրոմլեխի ավելի վաղ կառուցման մասին խոսելը, քան խուցը՝ տրամաբանական և գործնական չէ: Դամբարաններ կան, որոնց կրոմլեխները հազիվ շրջանակում են խցի եզրերը: Հետևաբար, նախորոք կառուցված կրոմլեխը կարող էր խոչընդոտել թե՛ խցի պատրաստմանը և թե՛ բուն արարողակարգին: Թաղման ծեսի այս մասը պետք է որ ընդհանուր լիներ բոլորի համար:

Հաջող են քննարկված կեռ, եռաժանի-երկժանի, կաթսա, կերնոս բաժինները, անվաձև երախակալներով սանձերը, ուսագոտին (էջ 102), տրամաբանական է երիթակի վերաբերյալ ուսումնասիրությունը: Սակայն, չպետք է դրանք շփոթել շքեղ զարդարված բռնակով, սեղանաձև շեղբով, կախելու օղակով օժտված բրոնզե իրերի հետ, որոնք մեծ մասամբ հայտնաբերվում են զենքերի միջավայրում:

Եռոտանի սկուտեղները քննարկելիս, Բ. Վարդանյանը Լոռի Բերդի № 21 դամբարանի բրոնզե օրինակը համարել է № 9 դամբարանից, իսկ մարդկային կոշիկի ձև ունեցող ոտքերը՝ «կենդանակերպ ոտիկներով» (էջ 147):

59 էջում հեղինակը գրում է, որ Լոռի Բերդի ուշ բրոնզի № № 1, 4, 8, 9 դամբանների խցերում, մոխրի շերտի առկայության վրա հիմնվելով, հեղինակը թաղման ծեսը բնորոշել է որպես դիակիզում: Հղումը՝ Ս. Դեվեջյան, Լոռի Բերդ I, 1981 թ. (ռուսերեն): Նախ № № 1 և 4 դամբարանները ուշբրոնզեդարյան չեն: Առաջինը պատկանում է միջին բրոնզի վաղ փուլին, որը հիմնովին պեղվել է 1981 թվականից շատ ավելի ուշ (տե՛ս Ս. Դեվեջյան, Լոռի Բերդ II, Երևան, 2006): Երկրորդը՝ մ.թ.ա. VII-VI դդ. դամբարան է՝ ուրարտական նյութով: № 8 դամբարանի հատակի և անկյունների մոխրով ծածկված լինելու պատճառով *ենթադրվել է՝* դիակիզում: Իսկ № 9 կողոպտված դամբարանի միայն վերգետնյա թմբում է նկատվել մոխիր, թաղման ծեսի մասին խոսք չկա:

Բ. Վարդանյանը մի քանի անգամ անդրադարձել է Նորաբացի կատակոմբային դամբարաններին (որոնք հրատարակված չեն), հղելով 1980 թ. ԱՕ-ում լույս տեսած մի քանի տողը (էջ 25 և այլ էջեր), երբ առկա են 1981 թ. հեղինակների կողմից Հնագիտության ինստիտուտի նստաշրջանում կարդացված զեկուցման երկէջանոց թեզիսները՝ «Հուշարձանների պեղումներ Նորաբաց և Ներքին Չարբախ գյուղերի միջև» (էջ 25-27): Դժբախտաբար, այս անտեսումը վերաբերում է բոլոր հնագետներին:

Էջ 94-ում հեղինակը գրում է, որ Չեշմանիսում հայտնաբերված եղջերվի եղջյուրից պատրաստված գործիքները, ըստ «ուսումնասիրողների մի մասի կարծիքի ծառայել են մանգաղի շուրթն ուղղելու նպատակին» և հղում է (Ս. Դեվեջյան, 2001, 129-130): Իրականում, դրա գործառույթի մասին բերվել են տարբեր հեղինակների թեական կարծիքները, այդ թվում՝ Բ. Կուֆտինի և Բ. Տեխովի: Նրանք ենթադրում են, որ այդ գործիքի միջոցով ուղղել են նիզակների և մանգաղների փայտե կոթերը: Գրքի հեղինակը կարծիք չի հայտնել այդ մասին: Ինչպե՞ս կարող էր եղջյուրե իրն ուղղել մետաղե մանգաղի շուրթը և ինչու՞ է այդպես հասկացել հայցվորը:

Նույն էջում հեղինակը Լոռի Բերդի կատվազգիների ոսկորների հայտնաբերումը վերագրում է № 62 դամբարանին, սակայն դրանք գտնվել են՝ № 56-II «Թագավորական» դամբարանում:

Համարում է, որ ի թիվս այլ վայրերի Լոռի Բերդում առկա է շան զոհաբերություն (էջ 91), որը իրականությանը չի համապատասխանում:

Անհավանական է Վանաձորի թանգարանի կաշվե բեկորի կապարճի հետ կապված պատմությունը, մանավանդ, երբ ասում է, «ակոսագոտիները կարող են հավելյալ ամրություն հաղորդել առարկային»:

Վանաձորի թանգարանի այսպես կոչված՝ զրահաշապկի բրոնզե բեկորը, որպես այդպիսին, հավանական չէ: Հայտնաբերման պատմությունը ոչ մի ձևով չի տրված և չի պատճառաբանված: Այդպիսի զրահաշապիկներ դեռևս չեն հայտնաբերվել, իսկ հեղինակը բրոնզե թիթեղը պատկերացնում է զրահաշապկի վերին, այսինքն, անմիջապես զինվորի վզի՝ ստորին մասում: Բեկորի վրա, նույնիսկ անցքեր չկան, գործվածքի կամ կաշվե շապկի վրա կարվելու, ամրանալու համար: Զուգահեռներ է բերում Ս. Եսայանի (1976, էջ 118, 121) և Օ. Խնկիկյանի (2002, էջ 198) գրքերից, որտեղ զրահաշապիկները բոլորովին այլ են՝ կոճակաձև բաղադրամասերով և յուրաքանչյուր հեղինակ իր նյութերը տեղադրել է Հ. Մնացականյանի Գոլովինոյի № 6 դամբարանի պեղումներից հայտնաբերված զրահաշապկի վերակազմության վրա (Աշխ. ՀՊՊԹ, 1959, հատոր 5, էջ 37, նկ. 15):

Էջ 95. Կարաջամիրլիի և Շիրակավանի առյուծով արձանադրոշները համեմատության եզրեր չունեն: Նաև իմաստաբանական առումով բոլորովին տարբեր են, թեև երկուսն էլ թվագրվում են ուշ բրոնզի ամենավաղ փուլով: Առաջինը, եթե առյուծի կողմից մարդուն հոշոտելու տեսարան է, ցույց տալու համար առյուծի ֆիզիկական գերազանցությունը մարդու նկատմամբ (եթե այլ իմաստ չի պարունակում), ապա, երկրորդը՝ ներկայացնում է արևի մարդակերպ աստվածությունը, զինվորի կերպարանքով, իր կցորդ կենդանու՝ առյուծի հետ, կանգնած՝ արձանադրոշի երկու թևերին, նույն բարձրության վրա: Հայտնի է, որ հնագույն հասարակություններում առյուծը ներկայացնում էր արևի աստվածությունը: Ավելի ուշ, երբ աստվածները մարդկային կերպարանք ստացան, նրանք հանդես էին գալիս իրենց հավասարազոր, կցորդ կենդանու ուղեկցությամբ: Չմոռանանք նաև պատվանդանի վրայի զույգ թռչունները, որոնք նույնպես խորհրդանշում են արևը և երկինքը:

Հայցվորի կարծիքով, ի տարբերություն Կարաջամիրլիի առյուծի, Շիրակավանի առյուծն արդեն պատկերված է մարդու կողմից հպատակված վիճակում:

Շիրակավանի զինվորի կերպարը ինչ-որ չափով պարզաբանվում և լրացվում է Լոռի Բերդի զինվորի արձանիկով (դամբ. 21), որի ազդրերի վրա բացված խոշոր կեռխաչ-արևները վկայում են զինվորի անմիջական կապը արևի աստծո հետ: Շիրակավանի զինվորը նույնպես կրում է պարուրաձև-արևներ: Այս կերպարը սխեմատիկ կերպով առկա

է նաև Հայաստանի վաղերկաթեղարյան դաշույնի բրոնզե պատյանին, հատիկազարդով կատարված (Որնակ), որը խոսում է կերպարի և դրա պաշտամունքի հարատևության մասին:

Հեղինակն առաջարկում է Արթիկի դամբարանադաշտը վերանվանել Հառիճի, որը սխալ կլիներ բոլոր տեսակետներից, մանավանդ, որ դրանց մեջ իրավամբ տեսնում է ժամանակագրական տարբերություններ (էջ 26):

Հակասություններ կան դամբարանադաշտերի հիմնահողային և սալարկղային (գուցե՞ քարարկղային) խցերի մասնավորեցման հատկանիշներում կամ նախադասությունը ճիշտ չի ձևակերպված (էջ 24):

Բ. Վարդանյանը երկպարույր և քառապարույր զարդաձևերը ձևաբանական առումով կապում է փոխադրամիջոցների հետ: Դրանք խորհրդանշաններ են, որոնք կարող էին լինել թե՛ ոսկե զարդերի, և թե՛ փայտե փոխադրամիջոցների վրա (էջ 165): Առավել ևս, ինչպե՞ս կարող էր ուլունքը փոխարինել սայլին կամ դրա մի մասին՝ pars pro toto (էջ 163): Նույնը վերաբերում է բրոնզե արձանադրոշներին (էջ 160):

Հեղինակը մի կողմից ասում է, որ կավե գլանաձև իրերը կարող են միայն պատվանդան լինել, մյուս կողմից, որ դրանց վրա որպես զոհասեղան, դրված են եղել խոշոր եղջերավոր անասունների ոսկորներով լի արկղաձև իրերը, և վառված կրակի ծուխը բարձրացել է արկղի մեջ՝ «ապահովելով զոհաբերության մսի ճենճերումը» (էջ 168): Հետաքրքիր է, որտեղի՞ց էր գալիս վառված կրակի ծուխը:

Այն, որ վաղ երկաթի դարում ծիսական արարողություններին այնքան էլ ուշադրություն չէին դարձնում, հավանական չէ, ուղղակի պատկերացումները փոքր-ինչ փոխվում են (էջ 160):

Դամբարանների նյութերի հիման վրա, եզրակացությունների մեջ հեղինակը գրում է, որ հասարակությունը մասնագիտական խոր շերտավորման է ենթարկվել, որ գոյություն ունեն «երկրագործի, մետաղագործի, ոսկերիչի, ջուլհակի, կթվորի» և այլ դամբարաններ (էջ 176): Միթե՞ երկրագործը չէր կարող կթվորությամբ կամ ջուլհակագործությամբ զբաղվել, կամ ինչո՞վ էր տարբերակվում այն, մյուս դամբարաններից: Առանձին դեպքերում կարելի է զանազանել, ասենք, քրմի կամ ատաղձագործի դամբարանները: Սակայն, այս տրամաբանությամբ, ոսկով հարուստ դամբարանը կարող էր պատկանել ոսկերչի, կճուճներով հարուստը՝ կթվորի, բրոնզով հարուստը՝ մետաղագործի և այսպես շարունակ:

«Շտանդարտի» փոխարեն առաջարկում ենք օգտագործել «արձանադրոշ» բառը, որն առարկային ճշգրիտ բնորոշումն է (տե՛ս Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, Երևան, 1979, հատոր I):

Ոչ թե Կուդուլի, այլ Կուդուրլի:

Էթիկայի կանոնների խախտումներ կան. գրականության ցանկում և հղումներում հեղինակը իր ազգանունը առաջինն է ներկայացրել, երբ իրականում այդպես չէ: Իր նկարած թանգարանային իրերի վրա (ոչ իր կողմից պեղված), ավելացրել է ազգանունը և հեղինակային իրավունքի նշանը:

Անուշադրության սխալներ կան էջերի և նկարների հղումներում:

Ներկայացված նկատառումները որևէ կերպ չեն ստվերում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը: Դրանք առաջարկություններ են հեղինակի հետագա հետազոտական աշխատանքների համար:

Ատենախոսի հրատարակած աշխատություններն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական բովանդակությունը և հիմնական ձեռքբերումները:

Թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈՀ-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջները, ուստի միջնորդում ենք մասնագիտական խորհրդին Բենիկ Վարդանի Վարդանյանին շնորհել Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաղ հնագիտության բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

Սեդա Հրանտի Դեվեջյան

Ս. Դեվեջյանի կարծիքը հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն՝

Ա. Ա. Բորոխյան